ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՊԱՐՍԿԱԼԵԶՈՒ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող պարսկերեն վավերագրերի շարքում մեծ թիվ են կազմում Սյունիքի XIII – XIX դարերի պատմությանը վերաբերող փաստաթղթերը: Նրանց մեծ մասը ուսումնասիրվել և հրատարակվել է Հ. Փափազյանի կողմից առանձին հոդվածներում, «Մատենադարանի պարսկերեն հրովարտակների» երեք պրակներում[1] և Արևելյան Հայաստանի XVI-XVII դարերի ագրարային հարաբերությունների քննությանը նվիրված մենագրությունում[2].

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող վավերագրերից շուրջ 50-ը վերաբերում են բացառապես Տաթևի վանքի XVII դարի երկրորդ կեսի պատմությանը: Դրանց մեծ մասը շահական ու տեղական կառավարիչների հրովարտակներն են, որոնք ձեռք է բերել Տաթևի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը, իսկ երկուսը՝ նրա հաջորդ Զաքարիան: Կան նաև կալվածագրեր, համախոսական գրություններ, պարսից պաշտոնյաների զեկուցագրեր և շար'ի դատարանի արձանագրություններ:

Այդ վավերագրերը որոշակի արժեք ներկայացնող փաստագրական նոր տվյալներ են պարունակում Սյունյաց թեմի հոգևոր առաջնորդների գործունեության թե՛ բնույթի, թե՛ ժամանակագրական շրջանակների և թե՛ ընդհանրապես Սյունիքում զարգացող դեպքերի վերաբերյալ, որոնք բացակայում են այլ աղբյուրներում:

Առաջին հերթին դրանք լրացնում են բավականին երկար ժամանակ Տաթևի թեմի առաջնորդի պաշտոնը զբաղեցրած Հովհաննես եպիսկոպոսի կյանքին ու գործունեությանը վերաբերող այն սուղ տվյալները, որոնք գտնում ենք հայկական աղբյուրներում: Ղևոնդ Ալիշանը նրան անվանում է Հովհաննես Շապանօղլի և նշում, որ նա Շինաթաղ գյուղից էր[3] և, որ նրա կողմից էր կառուցվել Տաթևի վանքի «առաջնորդարանն յարեւելակողմն ի բարձրավանդակի գեղահայեաց ի ձորն անդնդախոր»[4]: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի թղթ. 2ա, վավե-

բազիր 53-ը, հնարավոր է դարձնում ճշգրտել Հովհաննես վարդապետի Տաթևի թեմի առաջնորդ դառնալու թվականը: Այդ վավերագիրը իրենից ներկայացնում է շահ Աբաս Բ-ի 1662թ. հրամանագիրը, որով Տաթևին ենթակա հայկական հոգևոր գործերի ղեկավարությունը հանձնվում է Հովհաննես վարդապետին, այսինքն՝ հաստատում է վերջինիս Տաթևի թեմի առաջնորդի պաշտոնում: Պետք է նշել, որ 1648 թվականից մինչ այդ թվականը ընկած ժամանակահատվածում Տաթևի հոգևոր գործերին վերաբերող, որևէ շահական հրամանագիր Մատենադարանում չկա, այն դեպքում, երբ Հովհաննես Շապանօղլի եպիսկոպոսի կողմից 1661թ-ից մինչև 1686թ. ընկած ժամանակահատվածում ձեռք են բերվել 40-ից ավելի հրամանագրեր: Այդ թվում կա նաև 1682թ. այդ պաշտոնում նրան վերահաստատող նույն շահի հրովարտակը, որում նշվում են Տաթևի մեջ մտնող շրջանները՝ «Գյոքչան, Քաշաթաղը, Արասբարը, Ղափանաթը, Բարգուշատը, Ազատ-Ջիբանը և Ղարադաղը»[5]:

«Շարակարգութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց արարեալ ի միաբանից Տաթևոյ վանայ» աշխատությունում, որը հրատարակվել է որպես 1859թ. Փարիզում տպագրված Ատ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի հավելված, նշվում է, որ Հովհաննես եպիսկոպոսը յոթ անգամ գնում է Սպահան՝ շահ Սուլթան Հուսեյնին ներկայանալու և մահանում է Թավրիզում՝ իր վերջին այցից վերադառնալու ճանապարհին: Նրա մարմինը տեղափոխվում է Տաթև և թաղվում այնտեղ[6]: Այստեղ հարկ է նշել, որ Իրանի շահ Սուլթան Հուսեյնը իշխել է 1694-1722թթ., մինչդեռ Հովհաննես վարդապետի կողմից ստացված հրովարտակները տրված են շահ Աբաս Բ-ի (1642-1666) և շահ Սուլեյմանի (1666-1693) կողմից: Քանի որ հայտնի չէ Հովհաննես վարդապետի մահվան թվականը, իսկ Մատենադարանում պահվող հրամանագրերից ժամանակագրական առումով վերջինը, որում նշվում է նրա անունը, տրված է 1687թ.,՝ հնարավոր ենք համարում, որ նա հրամանագրեր ձեռք բերած լինի նաև շահ Սուլթան Հուսեյնից, որոնց մասին մենք տվյալներ չունենք: Հնարավոր է, որ նրա վերջին ճանապարհորդությունը դեպի Սպահան տեղի ունեցած լինի 1694-1697թթ., այսինքն մինչև այն թվականը, երբ նրա հաջորդ Զաքարիա վարդապետը Տաթևի վանքը պարտատերերի պահանջներից պաշտպանելու նպատակով ձեռք է բերում առաջին հրովարտակը[8]:

Յոթ անգամ շահի մոտ Սպահան գնացած լինելու հանգամանքը բացատրում է այն, թե ինչպես է Հովհաննես եպիսկոպոսին հաջողվել այդքան շատ շահական հրամանագրեր ձեռք բերել, ինչպես նաև վկայում է նրա եռանդի ու անկոտրում կամքի մասին, որը չնայած շահական կենտրոնական իշխանության թուլացմանն ու տեղական իշխանությունների կամայականություններին, չէր հոգնում ու հուսահատվում տեղա-

կան պաշտոնյաների, քոչվոր ցեղերի, ինչպես նաև անհնազանդ հայ գյուղացիների անօրինական արարքների դեմ պայքար մղելուց:

Վերոհիշյալ վավերագրերում հստակ արտացոլվել է տվյալ ժամանակաշրջանում Սյունիքի քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր դրությունը անկում ապրող Սեֆյան Իրանի կազմում: Կենտրոնաձիգ ուժեղ իշխանության բացակայության մասին է խոսում հենց այն հանգամանքը, որ վավերագրերից շատերը կազմված են միևնույն խնդրի կապակցությամբ և ունեն գրեթե նույն բովանդակությունը, բայց ուղղված են տարբեր անձանց և թվագրված են տարբեր թվականներով, թեև խնդրարկուն միևնույն անձն է: Այսինքն բարձրացված հարցը տարիներ շարունակ լուծում չի ստացել և հրամանը կամ դատական ատյանների որոշումները չեն կատարվել:

Հովհաննես եպիսկոպոսի կողմից ձեռք բերված հրովարտակների հիմնական մասի նպատակը վանքի կալվածքների պաշտպանությունն ու նրանցից ստացվող եկամուտների ապահովումն էր տեղական իշխանավորների, վաշխառուների ու քոչվոր ցեղերի ոտնձգություններից: Նրանցում՝, ինչպես և նախորդ դարերում Տաթևի վանքին տրված հրովարտակներում, ամրագրվում է 16 գյուղերի (Բնունիս, Թաս, Ղասրաքիլիսա, Դաստակերտ, Գոլյազի, Սվարի, Տաթև, Խոտանան, Հալիձոր, Շնհեր, Խոտ, Դաշու, Աղաքենդ, Տանձատափ, Բորդի ու Կից), որպես վակֆային կալվածքների, պատկանելությունը Տաթևի վանքին: Վերը նշված ժամանակաշրջանի մի շարք հրովարտակներ հիմնվելով նախկինում այս առթիվ հրապարակված փաստաթղթերի (միսալներ, ֆաթվաներ, հոքմեր, վակֆնամեներ և այլն) վրա հաստատում են այդ գյուղերի Տաթևի վանքի վակֆը լինելու հանգամանքը և արգելում ամեն տեսակի հավակնություններն ու ոտնձգությունները նրանց նկատմամբ: Այս շարքում հատկանշական են Սեֆյան շահ Սուլեյմանի 1079, 1082 և 1086 հ. թ. հրամանագրերը տրված ի հաստատումն մահմեդական բարձրաստիճան հոգևորականության կողմից հրապարակված միսալների ու ֆաթվաների՝՝:

Նույն ժամանակաշրջանի հրովարտակներից[11] իմանում ենք, որ Տաթևի կալվածքների նկատմամբ շարունակ հավակնություններ էին հանդես բերում Ղափանի Դարաբաս գյուղի բուրքելու համայնքի ներկայացուցիչները, որոնք, լինելով Սյունիքի Օրբելյանների Բուրքելյան ճյուղի մահմեդականացած ժառանգները, հավանաբար ունեին որոշ հիմքեր իրենց պահանջների համար: Ինչպես նշվում է այս վեճի կապակցությամբ Հովհաննես եպիսկոպոսի կողմից ձեռք բերված փաստաթղթերից մեկում, վերոհիշյալ համայնքի ներկայացուցիչները այդ շրջանում զբաղեցնում էին Ղափանի դազիի, քալանթարի ու մելիքի պաշտոնները, և օգտվում իրենց դիրքերից իրենց պահանջները առաջ

տանելու համար[12]: 1662թ. Հովհաննես եպիսկոպոսի կողմից ձեռք բերված մի հրամանագրում[13], որը ևս տրված է Դարաբաս գյուղի բուրթելյու համայնքի և Տաթևի վանքի միջև ընթացող վեճերի կապակցությամբ, մատնանշվում են այդ համայնքի հավակնությունները Սվաթի, Տանձուտափ ու Խռաանան գյուղերի երեքական դանգերի նկատմամբ, ինչպես նաև նկարագրվում նրանց կողմից կատարված ոտնձգությունները: Վավերագրում նշվող բուրթելյու համայնքի ներկայացուցիչների անունների շարքում կարելի է գտնել նաև հայերի շրջանում ընդունված անուններ, ինչպիսիք են Իլիասը (Եղիասն է), Շահնազարը: Հովհաննես եպիսկոպոսին հաջողվում է ապացուցել վերոհիշյալ կալվածքների պատկանելությունը Տաթևի վանքին մի փաստաթղթի շնորհիվ, ըստ որի դրանք վակֆ էին արվել վանքին բուրթելյուների նախնիների կողմից[14]: Փաստաթղթում նշվող այս փաստը հաստատում է այն, որ, իրոք, բուրթելյու համայնքի ներկայացուցիչները Սյունիքի Օրբելյանների Բուրթելյան ճյուղի մահմեդականացած ժառանգներն էին: Վերոհիշյալ հրամանագրով խնդիրն այնուամենայնիվ չի լուծվել, քանի որ կան նաև հետագա տարիներին այդ հարցի շուրջ հրապարակված հրամանագրեր ու այլ փաստաթղթեր[15]: Պայքարն այնքան է սրվում, որ անգամ Հովհաննես եպիսկոպոսի դեմ բուրթելյուների ու Վաղադնի վանքի վանականների կողմից մի համախոսական գրություն է կազմվում և ներկայացվում պարսից իշխանություններին, թե իբր Հովհաննես եպիսկոպոսը Վաղադնի վանքի ունեցվածքը խլել և իրենց ծնող Ալեքսանոսին սպանել է: Ի պատասխան այդ գրության կազմվել է մեկ այլ համախոսական գրություն[16], որում ստորագրած մի շարք հեղինակավոր անձիք ու տեղական պաշտոնյաներ վկայում են վերը նշված առաջին համախոսական գրության կեղծ և զրպարտություն լինելու մասին[17]:

Մեծ թիվ են կազմում պաշտոնյաների չարաշահումների, կամայականությունների ու զանազան այլ անօրինական արարքների դեմ ուղղված փաստաթղթերը: Հատուկ այս կարգի արարքների կապակցությամբ Հովհաննես եպիսկոպոսի ջանքերով ձեռք են բերվել շահ Սուլեյմանի 1668 – 1685 թթ. հրապարակված մի քանի հրովարտակներ[18]:

Վավերագրերում նշմարվում է նաև այդ շրջանում զանազան օրինախախտ տարրերի ակտիվացումը: Հովհաննես վարդապետի խնդրանքով Շահ Սուլեյմանի կողմից 1668թ. հրապարակված հրովարտակը[19] նպատակ ուներ պաշտպանելու վանքի կալվածքների հարստությունը, բերքն ու տեղի բնակիչներին քոչվոր ցեղերի (ջավանշիր, օթուզիքի, քենգերլու, հաջիլու, կարաչոռլու, փուսյան) ոտնձգություններից, որոնք իրենց ամառանոցային ու ձմեռանոցային վայրերը քոչելու ընթացքում իջևանում էին վանքին պատկանող վայրերում ու մեծ վնաս հասցնում Տաթևի եկամուտներին: Այս կարգի հրովարտակ է հրապարակվել նույն

շահի կողմից նաև 1685թ., որտեղ Տաթևի հոգևոր առաջնորդը բողոքում է ահմադլու ցեղի կողմից գործված անօրինականությունների դեմ[20]: 1687թ. Ղափանի մեջ մանող Գյուլաբերդ գյուղի բնակչության խնդրանքով հրապարակված հրովարտակը կոչված էր պաշտպանելու վերոհիշյալ բնակավայրը խալֆանլու ցեղի ոտնձգություններից[21]:

Վերոհիշյալ ժամանակահատվածում պետական հարկերի շարունակ ծանրանալու հետևանքով հաճախակի էին դառնում նաև Տաթևի վանքի պատկանող կալվածքների բնակչության կողմից վանքի նկատմամբ իրենց պարտականությունների չկատարման դեպքերը, այնքան չնայած վանահոր բողոքներին, բնորոշ են վերոհիշյալ ժամանակաշրջանին և լուծում չստանալով առիթ էին դառնում կողմերից կաշառքներ գանձելու համար[22]:

1669-1687թթ. շուրջ մեկ տասնյակ փաստաթղթեր վերաբերում են Տաթևի վակֆային կալվածք հանդիսացող Ղարաքիլիսա գյուղի կապակցությամբ Հովհաննես եպիսկոպոսի և Շեյխ Քյարիմ ադ-Դինի ժառանգների միջև տարիներ շարունակ ընթացող վեճին: Հովհաննես եպիսկոպոսը բողոք է հայանում այդ գյուղից գանձվող հարկերի ապօրինի յուրացման ու այնտեղի բնակիչների անհնազանդության դեմ, որին ի պատասխան հրապարակված մի շարք շահական հրովարտակներ հաստատում են այդ գյուղի վակֆային պատկանելությունը Տաթևի վանքին[23]: Այս առթիվ 1670թ. հրապարակված տեղական կառավարչի հրամանագիրը հրահանգում է 50 թուման գանձել վանքի կողմից 8 տաբի չստացված բահրեչեի դիմաց[24]: Այս գյուղի պատկանելությունը Տաթևի վանքին և Հովհաննես վանահոր իրավացիությունը հաստատված է նաև դատական ատյանի արձանագրություն ներկայացնող մի փաստաթղթով և տեղի հեղինակավոր անձնանց կնիքներով հաստատված 1687թ. մի համախոսական գրությամբ[25]: Սինոյն խնդրի կապակցությամբ կազմված այս բազմաթիվ փաստաթղթերը մատնանշում են այն փաստը, որ Իրանի Սեֆյան պետության կենտրոնական իշխանության թուլացումը հանգեցրել էր տեղական բյուրակրատիայի քաշքշուկների ու կամայականությունների ուժեղացմանը և օրինական ճանապարհով հարցեր լուծելու անհնարինությանը, որը պետք է առաջ բերեր ինչպես հասարակ բնակչության, այնպես նաև հոգևորականության և տեղի ունևոր խավի դժգոհությունը:

Տաթևի վանքի դեմ գործված անօրինականությունները մանրամասն նկարագրող 2 ծավալուն հրովարտակներ[26] հետաքրքիր են նրանով, որ նրանցում մեկ առ մեկ պատկերվում է վակֆային կալվածքներից յուրաքանչյուրում տիրող անկարգության բնույթը՝ հիշատակելով օրինազանցներին: Նրանցում կարելի է գտնել նաև տեղեկություններ տվյալ ժամանակաշրջանի իշխանավորների ու տեղական պաշտոնյաների,

նաև Սյունիքի մելիքների, մասնավորապես Անգեղակոթի Մելիք Սաֆռազի մասին: Մատնանշվող օրինախախտ անձանց ու համայնքների մեջ նշանակալի տեղ են զբաղեցնում մահմեդական պաշտոնյաները[22], քոչվոր ցեղերը[23] ու նրանց ավագանու ներկայացուցիչները, ինչպիսիք են, օրինակ, Բաբեր Բեկ ու Ղափլան Բեկ Քենգերլուները, Ջհանգիր Ալի Շադիլուն, Մուհամմադ Սալեհ Ղարադաղին, դազի Իսմայիլը և այլն[29]:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում Իրանում ուժեղացել էր անհանդուրժողականությունը կյանական վտքրամասնությունների, այդ թվում նաև հայերի հանդեպ: Այս ամենն իր արտացոլումն է գտել պարսից շահերի կողմից հրապարակված հրամանագրերում:

Էջմիածնի Հակոբ կաթողիկոսի ձեռք բերած մահմեդական բարձրաստիճան հոգևորականության կողմից հրապարակված ֆաթվաները հաստատող հրովարտակների մեծ մասում[30] արգելվում էին հնազանդ զիմմի հանդիսացող իրանահպատակ հայության նկատմամբ բռնությունները, ու իրավունք տալիս հայերին հետևելու իրենց հավատի օրենքներին ու սովորույթներին, վերանորոգելու իրենց եկեղեցիները և այլն: Շահ Սուլեյմանի 1668թ. հրովարտակներից մեկում արգելվում էր մահմեդական պաշտոնեությանը ապօրինի գումարներ գանձել հայերից քեղխուդա նշանակելու, իրենց մեռած ազգականներին թաղելու և վանքերը վերանորոգելու թույլտվության համար[31]:

Ընդհանրապես, նշված ժամանակաշրջանում Հայաստանում լայն թափ է ստանում եկեղեցական շինարարությունը, որից անմասն չի մնում նաև Սյունիքը: 1650թ. կառուցվում է Գիտաթաղ գյուղի եկեղեցին[32], 1661թ. կառուցվում է Խնձոռեսկի Ս. Հռիփսիմե եկեղեցին[33], 1666թ. Լոր գյուղի Ս. Գևորգ եկեղեցին[34], 1676թ.՝ Շնհերի Կուսանաց անապատը[35], 1681թ. Վայոց ձորի Խաչիկ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին[36], 1692թ.՝ Վայոց ձորի Օրթաքենդ գյուղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին[37], 1671թ. վերանորոգվում է Գնդեվանքի եկեղեցին[38] և այլն: Զանազան պատճառներով վնասված ու ավերված եկեղեցիների վերանորոգման, նորերի կառուցման համար անհրաժեշտ էր նախ ստանալ շահի, ապա նաև տեղական իշխանությունների թույլտվությունը: Այս պատճառով պահպանվել են մի շարք շահական հրամանագրեր, որոնք թույլատրում են ինչպես ընդհանրապես Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում (այդ թվում նաև Սյունիքի գավառներում), այնպես էլ զանազան վանքերում եկեղեցական շինարարության անցկացումը: Սեֆյան շահ Սուլեյմանի 1668թ. մի հրամանագիր[39] հաստատում է մահմեդական հոգևորականության հրապարակած ֆաթվան, որով թույլատրվում է Սյունիքի բնակավայրերում, մասնավորապես Բռնակոթում, Անգեղակոթում, Մեղրիում և Դարաբասում վերանորոգել վանքերը: Այսպիսի մի հրամանագիր էլ հրապարակվել է 1669թ. Վայոց ձորի Շատիկ Անապա-

տի վերանորոգումը հնարավոր դարձնելու նպատակով[40], որը իրականացվում է վանքի վանահայր Մովսես վարդապետի ջանքերով[41]: Այնուամենայնիվ Մովսես վարդապետին հեշտ չի հղել այդ Անապատը շենացնելը, որովհետև կա նաև վերջինիս կողմից 1675թ. ձեռք բերված մի հրովարտակ, որով վերջինս խնդրում է պաշտպանել իրեն ու վանքի միաբանությանը նեղիչներից, որոնք խանգարում են նրանց բնակությանը Շատիկ անապատում[42]:

Պարսից հրովարտակները, ինչպես տեսնում ենք, լիովին արտացոլում են Սյունիքում XVII դարի երկրորդ կեսին ստեղծված անհանգիստ դրությունը, որի արդյունքում XVIII դարի սկզբին Սեֆյան Իրանի տիրապետության դեմ ժողովրդական շարժումներ են ծավալվում:

Թարգմանություն
Կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 65, բնագիր,
մեծ. 48 x 19 սմ, գիր՝ շիքասթե - նաստա'լիղ.

Սեֆյան Շահ Սուլեյմանի կնիքը

Արքայական հրաման եղավ հետևյալ կապակցությամբ. օրերս Ղափանաթի Տաթևի վանքի միաբանության ընտրյալ Հովհաննես քահանան գալով աշխարհի ապավենի պալատ տեղեկացրեց, որ Ղարաբաղի ջավանշիր, օթուզիքի[43], քենգերլու[44], շառվանշահլու[45], հաջիլու[46], խոջաաբու-իսհաղլու, քրդական կարաչոռլու[47], փուսյան[48] ու թարաքեմե[49] ցեղերը իրենց ամառանոցային ու ձմեռանոցային վայրերը քոչելիս իջևանում են վերոհիշյալ վանքի վակֆային[50] մահալներում[51], նրա ցանքսերում արածեցնում իրենց չորքոտանի կենդանիներին ու բերքը ոչնչացնում, նենգորեն ռայաթների[52] ձիերը, կովերն ու ոչխարները տանում - մորթում են, բռնի ու ապօրինի արարքներ գործում: Ռայաթները այսպիսի կյանքից փախել, ցաքուցրիվ են եղել, և մահալները ամայացել են: Այս պատճառով [Հովհաննեսը] արքայական հրաման խնդրեց: Հետևաբար, կարգադրեցինք, որ եթե իրոք այդպես է, ապա այսուհետև թող որ ցեղերից որևէ մեկը հրամանին ու կարգին հակառակ այդ մահալի հողերում կանգ չառնի և վակֆային կալվածքների ռայաթներին ու հողագործներին չնեղի, նրանց ունեցվածքն ու ընտանի կենդանիներին ապօրինաբար չհափշտակի: Իսկ եթե ռայաթների համաձայնությամբ իջևանեն, ապա թող կարգին համաձայն *յուրտանի*[53] վճարեն: Այնտեղի բարձրաստիճան բեկլարբեկը[54] պարտավոր է օրինավոր օգնություն ցուցաբերել և թույլ չտալ, որպեսզի ցեղերն ու ցեղախմբերը ապօրինաբար նշված վայրերում կանգ առնելով, վերոհիշյալ վակֆերի ռայաթներին ու հողագործներին նեղություն պատճառեն: Եթե այդ ցեղերից որևէ մեկը հրա-

մանին ու կարգին հակառակ այդ մահալների ռայաթներից ու հողագործներից որևէ բան հափշտակած ու նրանց բերքին վնաս հասցրած լինի, թող ըստ կարգադրության վերականգնեն ոտնահարված իրավունքները: Եվ թող այս ընդունեն որպես խիստ հրաման ու ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն:

Գրվեց 1079թ. ռաբի՝ առաջին ամսին[55]:

Թարգմանություն
Կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 66, բնագիր,
մեծ. 18.5 x 47.5 սմ, գիր՝ շիքասթե - նասթա՝լիղ

Սեֆյան շահ Սուլեյմանի կնիքը

Արքայական հրաման եղավ, քանզի այդ ժամանակ Ղափանաթի Տաթևի վանքի նմանների մեջ լավագույն Հովհաննես քահանան ու միաբանները աշխարհի ապավենի պալատը գալով՝ տեղեկացրին, որ այդ երկրի կառավարիչներն ու բնակչությունը նրանց հանդեպ բռնություն ու չարաշահումներ են թույլ տվել՝ արժանապատիվ շար՝ին[56] ու կարգին հակառակ գումար հարկադրաբար գանձելով, այն դեպքում, երբ նման պահանջների առթիվ բարձրագույն հրամանագրեր կան: Այս պատճառով վերստին խնդրեցին արքայական հրամանագիր բարձրաստիճան ազնվական, խասսե-ե շարիֆեի[57] ծառա հարկահավաք Սուլեյման բեկի անունով, որպեսզի այդ պարտադիր հրամանագրերի բովանդակությանը համապատասխան այդ գանձումները վերցնի ու հետ վերադարձնի: Ուստի կարգադրեցինք, որ վերոհիշյալ բարձրաստիճան ազնվական Սուլեյման բեկը ամենալուսավոր շար՝ի հանձնակատարների ներկայությամբ պարտադիր հրամանագրերի ու սրբազան շարիաթի՝[58] օրենքին համապատասխան վերոհիշյալ անձանց [Հովհաննեսի ու Տաթևի միաբանների] պահանջած օրինական գումարները շար՝ի հաստատումից հետո վերցնեն ու հետ վերադարձնեն: Եվ այնպես անեն որպեսզի արդարություն հաստատվի, և անօրինական բռնություններ ու չարաշահումներ տեղի չունենան: Այնտեղի բարձրաստիճան բեկլարբեկը պարտավոր է վերոհիշյալ հարկահավաքին օրինական օգնություն ցուցաբերել: Եվ այս թող խիստ կարգադրություն համարեն ու պատասխանատու լինեն:

Գրվեց 1079թ. զիհեջջե ամսին[59]:





KRISTINE KOSTIKYAN

THE HISTORY TATEV MONASTERY IN THE SECOND HALF OF 17TH CENTURY ACCORDING TO PERSIAN DOCUMENTS

About 50 Persian documents (decrees, deeds of purchase, reports of local administrators and etc) of Yerevan Matenadaran refer to the history of Tatev Monastery in the second half of 17th Century. The major part of these documents being obtained by Hovhannes Episcop, the prior of Tatev Monastery contain important information about his activities and various aspects of the situation in Siunik Region under the rule of Safavid Shahs in the decline period of Safavid Power. Several decrees were issued on each problem, which show that the orders were often not properly executed. The Persian documents of this period also witness of the increase of bribery and abuses among the local administrators and activization of various illegal elements in the region in general.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այդ պրակներում ընդգրկված են 1449-1650թթ. վավերագրերը (Տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, պրակ II, Երևան, 1959, Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ I, Երևան, 1968):
2. А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ереван, 1972,
3. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 220:
4. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 234:
5. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 99, 111:
6. Ստ. Օրբէլեան մետրապօլիտ Սիւնեաց, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 275:
7. ԱՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 121:
8. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 127:
9. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 68, 85ա; թղթ. 2բ, 114
10. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 67ա, 68, 81, 85ա:
11. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 61ա, 69, 70ա,
12. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 70ա:
13. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 61ա:
14. Նույն տեղում:
15. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 62ա, 63, 69, 85ա, 103 և այլն:
16. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ 2ա, վավ. 86:
17. Տե՛ս նաև ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 71:
18. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 66, 73, 87 և 2բ թղթ., վավ. 107ա, 109:

19. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 65:
20. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 113:
21. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 117:
22. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 73; թղթ. 2բ, 110, 112:
23. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 72, 75ա, 79; թղթ. 2բ, վավ. 115, 120:
24. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 78ա:
25. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 96; թղթ. 2բ, վավ. 121:
26. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 108ա, 118:
27. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա,վավ. 54, 87:
28. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա,վավ. 113:
29. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ,վավ. 108ա, 118:
30. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 145, 136, 144 և այլն:
31. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 177:
32. Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, էջ 128:
33. Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 63:
34. Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 109:
35. Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 57:
36. Դ. Ալիշան, Սիսական, էջ 172:
37. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 129:
38. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 105:
39. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, 130բ:
40. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 124:
41. տե՛ս Դ. Ալիշան, Սիսական, էջ 159:
42. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 114:
43. Օթուզիքին 32 քրդական ու թյուրքական մար ցեղերի արհեստական միավորում էր, որի մեջ էր մանում նաև ջևանշիր ցեղը, (տե՛ս И. П. Петрушевский, ук. соч., с. 96, 136):
44. Քենգերլու ցեղը ղզլբաշ ցեղերի թվին պատկանող ուսթաջլու ցեղի ճյուղերից էր, և նրա առաջնորդների ժառանգական *օլքան* էր Նախիջևանի *վիլայեթը* (տե՛ս И. П. Петрушевский, ук. соч., с. 94, 127):
45. Շարվանշահլու ցեղը մասին նշված է Դևոնդ Ալիշանի կողմից (Դ. Ալիշան, Սիսական, էջ 99):
46. Հաճիլու ցեղը նույնպես հիշատակվում է Սյունիքի տարածքում (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 101)
47. XIX դարում Դարալագյազի շրջանում էր բնակվում իսլամի շիա ուղղությանը պատկանող քրդական կիսաքոչվոր կարաչոռլու ցեղը (տե՛ս П. Лерх, Изследования об иранских курдах и их предках, северных халдеях, кн. 1, СПб., 1856, с. 89):
48. Փուլյան քրդական ցեղը գրանցվել է Շոպինի կողմից կազմված Երևանի նահանգի հիշատակարանում (Լ. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, СПб. 1852, с. 719):

49. Թարաքեմե - Թուրքմեն բառի հոգնակին է: Թյուրքալեզու թուրքմենական ցեղերը պատկանում էին ղզլբաշ ցեղերի թվին (տես И. П. Петрушевский, ук. соч., с. 91, 92): Թարաքեմե անունով հայտնի էին Ղարաբաղի տարածքում գտնվող մի քանի բնակավայր (տես Описание Карабагской провинции, с. 11):
50. Վակֆ - وقف (արաբ.) – Բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին նվիրված՝ վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, նվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և որպես այդպիսիք ազատվում էին պետական հարկերից (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 2, էջ 120):
51. Մահալ - محال (արաբ.) – «Մահալլ - محل» (վայր) բառի հոգնակի ձևն է, որ բառացի նշանակում է «վայրեր», բայց այս տերմինը հաճախ գործ էր ածվում արդի «շրջան»-ի իմաստով և համանիշ էր «նահիա»-ին (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 113):
52. Ռայաթ, ճիշտը՝ ռահիյյաթ - رعیت (արաբ.) – Սկզբնաղբյուրներում գործ է ածվում հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ գյուղացիության իմաստով: Իսկ խաշնարած քոչվորությունը կոչվում էր «իլաթ - ایلات» և ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 118-119):
53. Հարկ, որ վճարվում էր քոչվոր ցեղերի կողմից իրենց քոչի ընթացքում որևէ տեղ կանգ առնելու համար տեղի սեփականատիրոջը:
54. Բեկլարբեկ - بیگلربیگ (թուրք.) – Սեֆյան Իրանի սահմանամերձ նահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր: Այս անվան արաբերեն համանիշն է «ամիր – ուլ ումարա - امیرالامرا», պարսկերեն արտահայտությամբ՝ «միր-ե միրան - میر میران»: Սահմանամերձ կուսակալությունները, որոնք անվանվում էին բեկլարբեկություններ (بیگلربیگی) չափազանց նման էին Արշակունյաց Հայաստանի բդեշխություններին և կոչված էին վտանգի դեպքում միավորելու մերձակա մյուս խանությունների զինվորական ուժերը, իսկ վերջիններս իրենց հերթին պարտավոր էին ենթարկվել բեկլարբեկին, որպես գլխավոր զինվորական հրամանատարի:
55. Իրանում ԺԶ - ԺԷ դարերում կային 13 բեկլարբեկություններ, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանումն էին գտնվում Ատրպատականի, Ղարաբաղի (Գանձակի), Շիրվանի և Չուխուր Սաադի կամ Երևանի բեկլարբեկությունները (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 106):
56. 1668/VIII:
57. Շար՝ - شرع (արաբ.) – Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրաան-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի

բարձրաստիճան հոգևորականները (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 117):

58. Խասսե-յե շարիֆե - خاصة شريفه (արաբ.) - Այսպես էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատությունները միասին վերցրած: դրանք բոլորն ունեին հատուկ գործերի կառավարչություն, որ կոչվում էր «Սարքար-ե խասսե-յե շարիֆե» (سرکار خاصه شریفه) (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 110):

59. Շարիաթ - شریعت (արաբ.) – Մուսուլմանական կրոնական օրենքներ հաստատված նորմեր, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների բարձրագույն կրոնական - դատական ատյանը: Այս հաստատությունը հաճախ անվանվում էր հենց այդ օրենքների անունով, սակայն սովորաբար այն կոչվում էր «Շար'»: Շարիաթի կամ Շար'ի հոգևոր ատյաններում էին քննվում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջը քաղաքացիների միջև առաջացած վեճերը: Այդ ատյանին կից կային նաև նոտարական գրասենյակներ՝ «մահզար»-ներ, որտեղ տեղի էին ունենում կալվածքի առուծախի, վարձակալման, փոխատվության, ամուսնության և քաղաքացիների սոցիալական դրությանը վերաբերող այլ ակտեր, կազմվում էին արձանագրություններ և տրվում էին համապատասխան փաստաթղթեր և նոտարական պատճեններ (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 2, էջ 227):

60. 1669/V:

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2ա, վավ. 65

مهر شاه سلیمان: [بندهٔ شاه دین سلیمان است ۱۰۷۸ - اللهم صل علی النبی و الوصی و البتول و السبطین و السجاد و الباقر و الصادق و الکاظم و الرضا و التاقی و النافی و الزکی و المهدی]

فرمان همایون شد انکه چون دربنولا زبدة‌الاشباه اوانس مهراسیا در میابان وانک طاطف قبانات بدرگاه جهان‌پناه آمده بعرض رسانیدند که جماعت الوسات و احشامات جوانشیر و اتوزیکی و کنگرلو و سروینشاهلو و صاجیلو و خواجه ابواسحقلو و اکراد قراچورلو و بسیان و تراکمات قراباغ در حینی که به ییلاق و قشلاق میروند در محال موقوفات وانک مزبور نزول نموده مزروعات و محصولات محال‌المزبوره را بدواب و اغنام خود چرانیده نقصان و خسارت بسیار میرسانند و اسب و گاو و گوسفند رعایا را بر سبیل در ذیل میبرند و اموال و اجناس رعایا را بخلافحساب مکر و میکشند و شلتاقات خلافحساب میکنند و از نهمر رعایا متفرق و محالمزبوره مخروب میگردد و دربنباب استدعاء حکم اشرف نمودند. بنابربن مقرر فرمودیم که

هر گاه نمود واقع بوده باشد من بعد احدی از الوسات و احشامات مزبوره بخلافحکم و حساب در اراضی محالمزبوره نزول ننموده مزاحمت بحال رعایا و زارعین موقوفات مزبوره نرسانند و اموال واجناس و دواب و اغنام ایشانرا بیجهت و بخلافحساب بجبر نگیرند و هر گاه برضای رعایای محالمزبوره نزول نمایند از عهدهٔ یورتانه ان موافق حق و حساب بیرون آیند. بعبدهٔ عالیجاه بیگاربیگی آنجا که امداد حسابی بتقدیم رسانند نگذارند که الوسات و احشامات مزبوره بخلافحکم و حساب در محال مزبوره نزول نموده مزاحمت بحال رعایا و زارعین موقوفات مزبوره نرسانند و چنانچه احدی از الوسات مزبوره بخلافحکم و حساب چیزی از رعایا و زارعین محالمزبوره ستانیده نقصان بمحصولات ایشان رسانیده باشد بقرار خاطر نشان گردیده احقاق حق نماید دربنباب قدغن دانسته هر ساله حکم مجدد نطلبند.

تحریراً فی شهر ربیع الاول سنهٔ ۱۰۷۹

ՍՍ, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2ա, վավ. 66

مهر شاه سلیمان: [بندهٔ شاه دین سلیمان است ۱۰۷۸ - اللهم صل علی النبی و الوصی و البتول و السبطین و السجاد و الباقر و الصادق و الکاظم و الرضا و التاقی و النقی و الزکی و المهدی]

فرمان همایون شد آنکه چون دربنوقت زبدةالاشباه اوانس مهراسیا و سایر سکنهٔ وانک طاطف مراتب بدرگاه جهانپناه آمده بعرض رسانیدند که از حکام و جماعت سکنهٔ انولایت ظلم و زیادتی بایشان واقع شده مبالغی بخلافشرع شریف و حساب از ایشان جبراً بازیافت نموده اند و احکام مطاعه لازمالاطاعه در باب مطالبات ایشان صادر شده مجدداً استدعاء حکم اشرف بمحصلی رفعت و معالی پناه سلیمان بیگ غلام خاصهٔ شریفه نمودند که موافق مضمون احکام مطاعه مطالبات ایشانرا موافق شرع شریف گرفته واصل و عاید گرداند بنابرین مقرر فرمودیم که رفعت و معالی پناه سلیسان بیگ مشارالیه در حضور اهالی شرع انور موافق احکام مطاعه لازم الاطاعه و قانون شریعت مقدس مطالبات شرعی و حسابی جماعت مزبوره را بعد از ثبوت و لزوم شرعی گرفته تسلیم و نوعی نماید که احقاق حق شده ظلم و تعدی و ستم و زیادتی خلافشرعی واقع نشود. بعهدهٔ عالیجاه بیگاربیگی آنحدود که در هر باب امداد و اعانت شرعی و حسابی محصل مزبور بتقدیم رساند. دربنباب قدغن دانسته در عهده شناسند.

تحریراً فی شهر ذیحجةالحرام سنهٔ ۱۰۷۹.